

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ԺԱՄՀԱՐՅԱՆ ԳԱԳԻԿ ԱՐԱՍՈՒ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԻ ՆԵՐԿՈՒՄԱԿՑԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԱՌՕՐԵԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ (1920-1930-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ)**

**Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական
գիտությունների թեկնածուի զիտական աստիճանի հայցման
ատենախոսության**

սեղմագիր

ԵՐԵՎԱՆ-2014

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝

պատմական գիտությունների թեկնածու,
դոցենտ Խաչատրյան Կ. Հ.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Մանուկյան Ա. Ս.

պատմական գիտությունների թեկնածու,
դոցենտ Զաքարյան Լ. Ս.

Առաջատար կազմակերպություն՝ Հայաստանի ազգային արխիվ

Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2014 թ. դեկտեմբերի 9-ին, ժամը 13⁰⁰-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՂ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդում (0019, ք. Երևան, Մ. Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014 թ. նոյեմբերի 8-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Մուրադյան Հ. Ղ.

ԱՏԵՆԱԽՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԱՐԴԻՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:

Համաշխարհային պատմագիտական միտքն այսօր առօրեականության պատմությանը՝ որպես պատմագիտական ուսումնասիրությունների որակապես նորուղություն, գիտական մեծ կարևորություն է հաղորդում: Պատճառը պատմական ուսումնասիրություններում ավանդական մոտեցումները վերանայելու, պատմական փաստերը նոր լույսի տակ վերլուծելու մտայնությունն է, որը եվրոպական և ռուսական պատմագրության մեջ այսօր ընդունվում է որպես գիտական անհրաժեշտություն:

Ակնհայտ է, որ հայոց պատմության շատ հիմնահարցեր նույնպես նորովի լուսաբանման կարիք ունեն: Այդ հիմնահարցերից շատերը վերաբերվում են հայոց պատմության խորհրդային ժամանակաշրջանին: Սովորական մարդկանց կյանքը պետական իշխանության ստեղծած անտվոր պայմաններում, կուսակցական մենատիրության ազդեցությունները հասարակական գիտակցության վրա, առհասարակ, առօրեական իրողությունները խորհրդային անբողջատիրության պայմաններում դուրս են մնացել հայ պատմագրության ուշադրությունից, կամ էլ սրանց հարևանցի անդրադարձ է կատարվել: Մինչդեռ այս հարցերի համակողմանի ուսումնասիրությունը չլուսաբանեց կարևոր է խորհրդային շրջանի հայոց պատմության համապարփակ լուսաբանման համար: Մեր ժողովրդի պատմության մեջ չափազանց առանցքային նշանակություն ունեցած պատմական այս ժամանակաշրջանում եղել են և՛ ձեռքբերումներ, և՛ կորուստներ: Սրանց օբյեկտիվ գնահատականը հնարավոր չէ՝ տուրք տալով միայն պատմական ավանդույթին: Պատմագիտական նոր մոտեցումները, որոնցով շարադրվում է առօրեականության պատմությունը, հնարավորություն են տալիս հասկանալ այս բարդ ու հակասական պատմական ժամանակաշրջանի ոգին, տեսնել պատմական այն խորքային գործընթացները, որոնք շատ հաճախ անտեսվել են ավանդական պատմագրության կողմից: Առօրեականության պատմությունը կարևոր նշանակություն ունի, որովհետև ժամանակաշրջանի հիմնահարցերի ձևակերպման ժամանակ կապեր է ստեղծում նաև այլ գիտությունների հետ՝ սոցիոլոգիա, մարդաբանություն, քաղաքագիտություն, փիլիսոփայություն և այլն: Սա հնարավորություն է տալիս զուտ պատմագիտական հիմնահարցի շրջանակներում մնալով՝ այդ հիմնահարցերի լուսաբանումը դարձնել առավել կենդանի և անբողջական:

ԱՏԵՆԱԽՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ:

Ատենախոսության նպատակն է խորհրդային Հայաստանի առօրեականության պատմության համատեքստում Հայաստանի կոմունիստական կուսակցության 1920-1930-ական թվականների ներկուսակցական կյանքի լուսաբանումը: Մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները.

- վերլուծել կոմունիստական կուսակցության քաղաքականությունը կուսակցական էթիկային և բարոյականությանը վերաբերող հարցերում, բացահայտել այս հարցում կուսակցության հիմնական մոտեցումները և կուսակցության անդամների ու հասարակության կողմից դրանց նկատմամբ եղած արձագանքները,

- բացահայտել կուսակցական-պետական վարչակարգի ընդհանուր թերություններով պայմանավորված բյուրոկրատիզմի դրսևորումների դերն ու ազդեցությունները առօրեական իրողությունների վրա, դրանց վերաբերյալ

հասարակության արձագանքները, կուսակցության և հասարակության կողմից այս երևույթներին հակազդելու ձևերն ու առանձնահատկությունները,

- լուսաբանել 1936-1937 թթ. իրագործված քաղաքական հետապնդումների հետևանքով խորհրդահայ հասարակության մեջ ձևավորված բարոյահոգեբանական հիվանդագին մթնոլորտը, բռնաճնշումների ազդեցությունը առօրեական իրողությունների վրա:

ԱՏԵՆԱԽՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ: Ատենախոսությունը շարադրված է օգտագործված գիտա-փաստական նյութի համակողմանի հետազոտության, համադրման, դրանց հիման վրա արված եզրահանգումներում և ձևակերպումներում կանխակալ, ոչ գիտական մոտեցումները բացառելու սկզբունքներով:

Քանի որ առօրեականության պատմության հետազոտություններում մեծապես օգտագործվում են մասնավոր բնույթի սկզբնաղբյուրներ՝ անձնական նամակներ, անհատների նամակներ իշխանության մարմիններին, հուշագրություններ կամ անձնական հիշողություններ, և այս նյութերի ուսումնասիրությունը ենթադրում է այլ տիպի հետազոտական մարտավարություն, ապա ատենախոսության մեջ կիրառվել է նաև նշված մարտավարությունը. ատենախոսության շարադրանքի մեջ չենք խուսափել նշված աղբյուրներում արտահայտված հուզական խոսքի վերլուծությունից՝ հավատարիմ մնալով նյութը անաչառ լուսաբանելու, գիտական գնահատականներով հիմնավորելու անհրաժեշտության սկզբունքին:

ԱՏԵՆԱԽՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ: Թեմայի ժամանակագրական առանցքը ներառում է Հայաստանի խորհրդայնացումից մինչև Հայրենական Մեծ պատերազմի նախօրեք ընդգրկող ժամանակաշրջանը, որում ծավալված առօրեական իրողություններում պարզորոշ ուրվագծվում է կրոն.միստական կուսակցական մեծատիրության հաստատման և ամրապնդման գործընթացը:

ԱՏԵՆԱԽՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅՑԸ ՈՒ ԳՈՐԾԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Առօրեականության պատմությանը վերաբերող հետազոտությունները նորույթ են մեզանում: Մինչ այժմ հայ պատմագրության կողմից առօրեականության պատմությանն ամբողջական ուշադրություն չի դարձվել, առօրեականության պատմությանը վերաբերող հիմնախնդիրներին լավագույն դեպքում կատարվել է հպանցիկ անդրադարձ: Մինչդեռ այսօր առօրեականության պատմությունը հանդիսանում է համաշխարհային պատմագիտական մտքի զարգացման հեռանկարային ուղղություններից մեկը, որի զարգացման համար մեծ հնարավորություններ կան նաև հայ պատմագրության մեջ: Առօրեականության տարաբնույթ հիմնախնդիրների հետազոտման անսպառ նյութ կա նաև մեզանում, և մանատիպ հետազոտությունները հնարավորություն ունեն նոր լույս սփռել հայ ժողովրդի պատմության առանձին հիմնախնդիրների վրա:

Ատենախոսությունն ունի նաև կիրառական-գործնական նշանակություն: Հայտնի է, որ կրոն.միստական կուսակցության մեծատիրությունը ԽՍՀՄ-ում արտահայվեց ժողովրդավարական գործընթացների խորը ճգնաժամով, ինչն ահռելի ազդեցություններ ունեցավ ԽՍՀՄ բոլոր ժողովուրդների պատմության վրա: Կուսակցական մեծատիրության և հասարակական կյանքի վրա նրա ունեցած բացասական ազդեցությունների համակողմանի վերլուծությունները, դրանց միջոցով պատմական օրինաչափությունների վերհանումն ու ամբողջական, օբյեկտիվ գիտական գնահատականները կօգնեն ներկայումս

տեղի ունեցող ժողովրդավարական գործընթացների ճիշտ արժևորմանը, անցյալի սխալների բացառմանը :

ԱՏԵՆԱԽՈՒԹՅԱՆ ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նորագույն պատմության բաժնի կողմից: Ատենախոսության առանձին հիմնադրույթներ ներկայացվել են հեղինակի հրատարակած հոդվածներում, գեկուցումների տեսքով ներկայացվել են մի շարք գիտաժողովներում:

ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ: Առօրեականության պատմությունը պատմագիտական ուսումնասիրությունների առանձին ուղղություն է դարձել 20-րդ դարի 60-ական թվականներին: Այսօր ևս արտերկրում առօրեականության պատմության հիմնախնդիրը գտնվում է պատմագիտական մտքի չմարող հետաքրքրության կիզակետում: Խորհրդային առօրեականությունը ակտիվ վերլուծվում է և՛ արևմտյան, և՛ ռուսական պատմագրության կողմից: Խորհրդային առօրեականության պատմությանը նվիրված իրենց գիտական ուսումնասիրություններով հայտնի են Նատալյա Պուշկարյովան, Նատալյա Լեբինան, Օլեգ Լեյբովիչը, Միխայիլ Կրոնը, Իգոր Օռլովը և ուրիշներ¹, որոնք համակողմանի ուսումնասիրության են վերցրել Խորհրդային Միության առօրեականության բազմաթիվ կողմերը մինչպատերազմական և հետպատերազմական ժամանակաշրջաններում: Այս հեղինակների ներդրումն անզնահատելի է հատկապես առօրեականության պատմության գիտական բովանդակության և որպես պատմագիտական ուսումնասիրությունների ուղղություն նրա գիտական հիմնախնդիրների ձևակերպման ուղղությամբ: Համապատասխանաբար, քաղաքական առօրեականության հիմնախնդրի ձևակերպման առումով արժեքավոր են Նատալյա Պլոտիչկինայի, Օլեգ Լեյբովիչի և Կիրիլ Սոլովյովի ուսումնասիրությունները²: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն աշխատությունը հայ պատմագրության մեջ առօրեականության պատմություն գրելու առաջին փորձն է՝ նպատակահարմար է գտնվել սույն ատենախոսության առաջին զվխում առանձին ենթահարցով առավել մանրամասն անդրադառնալ նշված հեղինակների տեսակետներին և հիմնավորումներին:

Խորհրդային Միությունում գոյություն ունեցած կուսակցական-պետական բյուրոկրատիզմը նույնպես արժանացել է գիտական համակողմանի վերլուծության հետխորհրդային ժամանակաշրջանի ռուս գիտնականների կողմից: Հարցի ուսումնասիրության մեջ ծանրակշիռ ներդրում են Ա. Խոցեյի³, Միխայիլ Վոսլենսկու⁴, Եվգենի Պարշակովի⁵ և այլոց ուսումնասիրությունները:

¹ Առավել մանրամասն «История повседневности» в современной российской историографии, <http://articlekz.com/node/710>:

² Плотицкина Н., Город, как пространство политической повседневности, Человек. Сообщество. Управление, 2012г, № 1, Соловьев К., Что такое политическая повседневность? (Алгоритмы принятия политических решений в России — притча во языцех. На подступах к теме — Кирилл Соловьев (РГГУ), заинтересовавшийся этой темой в связи с юбилеем своего педагога, историка русского либерализма В.В. Шелохаева.), Лейбович О., Дом о трех этажах, или как изучать повседневность поздней сталинской эпохи.

³ <http://www.materialist.kcn.ru/kniga10/s73.php3>:

⁴ Восленский М., Номенклатура. Господствующий класс Советского Союза, Москва, "Советская Россия" совм. с МП "Октябрь", 1991.

Արևմտյան պատմագրության մեջ խորհրդային առօրեականությանը համակողմանի անդրադարձ է կատարել Շեյլա Ֆիցպատրիկը, որի աշխատություններում⁵ լուսաբանված է խորհրդային ժողովրդի դժվարին կյանքը 1930-ական թթ. քաղաքում և գյուղում:

Թեպետև խորհրդային Հայաստանի առօրեականության պատմությունը գիտական առանձին ուսումնասիրությունների առարկա չի դարձել, այդուհանդերձ՝ հայ ժողովրդի պատմության խորհրդային ժամանակաշրջանի նկատմամբ աճող գիտական հետաքրքրությանը զուգընթաց շատ հայ պատմաբանների մոտ դիտարկվել է հարևանցի, սակայն շատ արժեքավոր անդրադարձ նաև առօրեականությանն առնչվող խնդիրներին: Այստեղ պետք է հատուկ նշել, որ առօրեականության պատմությունը գտնվում է պատմական գիտությունների համակարգում, հետևաբար ցանկացած պատմական ժամանակաշրջանի առօրեականության պատմության օբյեկտիվ ուսումնասիրությունների կարևորագույն նախապայմանը տվյալ ժամանակաշրջանի պատմա-քաղաքական, հասարակական, սոցիալ-տնտեսական և մշակութային իրողությունների հստակ պատկերացումն է: Այս առումով չափազանց կարևորվում են մի շարք հայ պատմաբանների՝ խորհրդային ժամանակաշրջանին վերաբերող գիտական ուսումնասիրությունները: Այդպիսիք են, օրինակ, Վ. Ղազախեցյանի, Հ. Հարությունյանի, Ա. Մանուկյանի, Կ. Խաչատրյանի և այլոց ուսումնասիրությունները, որոնցում խորհրդային Հայաստանի պատմության տարբեր հիմնահարցերի լուսաբանումը պարարտ հող է ստեղծում նաև խորհրդային Հայաստանի առօրեականության պատմության ուսումնասիրությունների համար: Այսպես՝ խորհրդային Հայաստանի ոչ միայն սոցիալ-տնտեսական կյանքին, այլ նաև հասարակական-քաղաքական իրողություններին համակողմանի անդրադարձ է կատարել Վ. Ղազախեցյանը: Մինչպատերազմական ժամանակաշրջանի առօրեական իրողությունների ուսումնասիրության համար արժեքավոր են նրա տեղեկությունները խորհրդային կարգերի հաստատումից մինչև 1940-ական թթ. Հայաստանում ծավալված կուսակցական և պետական շինարարության վերաբերյալ⁷: Վլադիմիր Ղազախեցյանի ուսումնասիրությունները կարևորվում են մի քանի տեսանկյունից: խորհրդային Հայաստանի ազգաբնակչության սոցիալ-տնտեսական վիճակին վերաբերող նրա համապարփակ ուսումնասիրությունները արժեքավոր են նրանց կենցաղի, հասարակության լայն զանգվածների առօրեական կյանքի ուսումնասիրությունների համար: Իսկ ներկուսակցական պայքարին, եկեղեցի-պետություն հարաբերություններին և կուսակցական մենատիրության հաստատմանը վերաբերող նրա դիտարկումները օգնում են բացահայտել Հայաստանում ծավալված քաղաքական առօրեականությանը վերաբերող կարևոր հարցեր, օգնում են առավել ամբողջական պատկերացում կազմել Հայաստանում կուսակցական ամբողջատիրության դրսևորումների մասին: Այս տեսանկյունից չափազանց

⁵ Паршаков Е., Экономическое развитие общества. Концепция кооперативного социализма., издательство ЛКИ, 2008.

⁶ Фицпатрик Ш., Повседневный сталинизм. Социальная история Советской России в 30-е годы: город., Москва, 2001, Его же; Сталинские крестьяне. Социальная история Советской России в 30-е годы: деревня., Москва, 2001.

⁷ Ղազախեցյան Վ., Հայաստանը 1920-1940 թթ., Երևան, 2006:

արժեքավոր է նաև առանձին աշխատությամբ⁸ Վլ. Ղազախեցյանի անդրադարձը ստալինյան բռնաճնշումներին, որտեղ հեղինակը պատմագիտական գնահատականներ է տվել Խորհրդային Հայաստանի պատմության մռայլ էջերից մեկին, որը, բնականաբար, իր լուրջ ազդեցություններն է ունեցել նաև ժամանակի առօրեական իրողությունների վրա:

1920-1922 թթ. հայ-ռուսական հարաբերությունները լուսաբանված են Կ. Խաչատրյանի աշխատության մեջ⁹, որտեղ, ի թիվս այլ հարցերի, հեղինակը լուսաբանել է նաև Հայաստանում Խորհրդային կարգերի հաստատման սկզբնական շրջանում տիրող սոցիալ-տնտեսական հարաբերությունները: Խորհրդային իշխանության կողմից իրականացված տնտեսական միջոցառումների (ռազմական կոմունիզմ, ՆԵՊ) համատեքստում հեղինակը կարևոր տեղեկություններ է հաղորդում նաև 1920-ականների սկզբին բուլշևիկյան իշխանության կողմից Հայաստանում իրականացվող բռնագրավումների, Հայաստանի պետական և կուսակցական մարմիններում եղած կադրային ճգնաժամի և դրա հաղթահարման ուղիների, Հայաստանի բնակչության սոցիալական կազմի, ինչպես նաև հայ ժողովրդին Խորհրդային Ռուսաստանի կողմից ուղարկված տնտեսական և կադրային օգնության մասին: 1920-ականների սկզբին Խորհրդային Հայաստանի առօրեականության պատմության համար այս հարցերի լուսաբանումը կարևորվում է հատկապես այն առումով, որ այս ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակի համակողմանի վերլուծությունն ապահովում է նպաստավոր պայմաններ ազգաբնակչության կենցաղին, նյութական ապահովությանը, պետություն-հասարակություն հարաբերություններին վերաբերող շատ հարցերի մասին պատկերացում կազմելու համար: Մեծ կարևորություն են ստանում հեղինակի դիտարկումները Ռուսաստանից Հայաստանին հատկացված օգնության մասին, որ պետք է մեղմեր Հայաստանում 1920-ականների սկզբին ազգաբնակչության մեջ տարածված սովը, սակայն մեծ մասամբ ուղղվում էր 11-րդ Կարմիր բանակի պահանջների բավարարմանը: Հեղինակն անդրադարձել է նաև Հայաստան ուղարկվող կոմունիստների առավելապես դժկամ վերաբերմունքին իրենց նոր նշանակամանը՝ հաշվի առնելով, որ աղքատ Հայաստանում աշխատանքը չէր նպաստելու նրանց պաշտոնական վերելքին, ինչպես նաև Սարգիս Լուկաշինի և Վլեքսանդր Մյասնիկյանի Հայաստան ուղարկվելու պատմական կարևոր նշանակությանը, որ պայմանավորված էր այս երկու կուսակցական-պետական գործիչների հմուտ և կառուցողական քաղաքականությամբ՝ ի նպաստ Հայաստանում սոցիալ-տնտեսական կյանքի աշխուժացման:

Խորհրդային Հայաստանի ազգաբնակչության առօրեական կյանքի լուսաբանման համար կարևոր նշանակություն ունի նաև Զ. Հարությունյանի աշխատությունը¹⁰, որում հեղինակի տեղեկությունները Հայաստանում բանվորական զանգվածների քանակական կազմի, նրանց սոցիալ-հասարակական, ստեղծագործական և գաղափարական ակտիվության վերաբերյալ խիստ արժեքավոր են Խորհրդային Հայաստանում բանվորական կենցաղի կազմակերպման, կուսակցության կողմից այդ ուղղությամբ համապատասխան միջոցառումների իրականացման և առօրեական կյանքում

⁸ Ղազախեցյան Վլ., 1937-ը Հայաստանում, Երևան, 2004:

⁹ Խաչատրյան Կ., Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թթ., Երևան, 2007:

¹⁰ Հարությունյան Զ., Հայկական ՍՍՀ բանվոր դասակարգը սոցիալիզմի ամրապնդման և զարգացման ժամանակաշրջանում (քանակը, կազմը), Երևան, ՀՍՄՀ ԳԱ հրատ., 1983:

դրանց արձագանքների ուսումնասիրությունների համար: Մեծ կարևորություն ունեն հեղինակի տեղեկությունները Հայաստանի ինդուստրացման տեմպերի, արդյունաբերական արտադրության ծավալների աճի վերաբերյալ: Այս տեղեկությունները կարևորվում են ինդուստրացման արդյունքում հասարակական կյանքում տեղ գտած հիմնական փոփոխությունների ուսումնասիրության տեսանկյունից:

Ուշագրավ է նաև Ա. Մանուկյանի աշխատությունը¹¹, որտեղ հեղինակն անդրադարձել է 1920-1940 թթ. Հայաստանի քաղաքական կյանքին: Այս հետազոտության կարևորությունը ևս մեծ է նշված ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական իրողությունների համատեքստում և կիրառված քաղաքական բռնաճնշումների տրամաբանությունը հասկանալու, կուսակցության ներսում, և հասարակության մեջ ընդհանրապես քաղաքական բռնաճնշումների զզոնությունները լուսաբանելու տեսանկյունից:

Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմությունը բազմաթիվ ուսումնասիրությունների առարկա է դարձել խորհրդային շրջանի շատ հայ պատմաբանների կողմից, որոնց աշխատությունները ևս կարևոր նշանակություն ունեն ատենախոսության թեմայի լուսաբանման համար: Ատենախոսության մեջ օգտագործվել են խորհրդային հեղինակներ Բագրատ Օհանջանյանի, Վլադիմիր Ներկարարյանի, Արշակ Վարդապետյանի ուսումնասիրությունները¹², Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմությանը վերաբերող աշխատությունը¹³ Ծատուր Աղայանի խմբագրմամբ, ինչպես նաև Ա. Հակոբյանի ուսումնասիրությունը¹⁴ Հայաստանի բանգյուղտեսչության ժողկոմատի գործունեության մասին¹⁴:

Խորհրդային Հայաստանի քաղաքական առօրեականության պատմության ուսումնասիրության համար արժեքավոր են նաև 1920-1930-ական թթ. կուսակցական և պետական գործիչների (Սարգիս Լուկաշին, Աղասի Խանջյան, Սահակ Տեր-Փարիթեյան) քաղաքական գործունեության տարբեր դրվագներ պարունակող ժողովածուները, որտեղ նրանց հողվածներում ու զեկույցներում կարևոր տեղեկություններ կան ուսումնասիրվող ժամանակաշրջանում երկրում ծավալված կուսակցական և պետական շինարարության տարաբնույթ հարցերի, հիմնախնդիրների և դրանց լուծման եղանակների վերաբերյալ¹⁵:

Խորհրդային Հայաստանի առօրեականության պատմության համար չափազանց կարևոր սկզբնաղբյուրներ են նաև անվտանգության միութենական մարմիններին տեղական կազմակերպություններից ուղարկված զեկուցագրերը¹⁶,

¹¹ Մանուկյան Ա., Քաղաքական կյանքը Հայաստանում 1920-1940 թթ., Երևան, 2002 թ.:

¹² Օհանջանյան Բ., Սովետական Հայաստանը ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում (1921-1925) (պատմագրական ակնարկ), Երևան, 1982, Ներկարարյան Վ., Հայաստանի կոմունիստական կուսակցության պայքարը երկրի ինդուստրացման և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման համար (1926-1929), Երևան, 1971, Վարդապետյան Ա., Հայաստանի արհմիությունների պատմություն (1905-1965), Երևան, 1969:

¹³ Աղայան Ծ. և ուրիշներ, Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր, Երևան, 1967:

¹⁴ Հակոբյան Ա., Հայաստանի բանգյուղտեսչությունը սոցիալիզմի համար նվաճած պայքարում, Երևան, 1974:

¹⁵ Լուկաշին Ա., Հողվածներ, զեկուցումներ, ճառեր, Երևան, 1986, Խանջյան Ա., Հողվածներ և ճառեր, Երևան, 1963, Տեր-Փարիթեյան Ա., Հողվածներ, ճառեր, փաստաթղթեր, Երևան, 1979:

¹⁶ Հայաստանը պետական գաղտնի փաստաթղթերում (1922-1929), Երևան, 2008:

որոնցում կարևոր տեղեկություններ կան Հայաստանի գյուղական և քաղաքային շրջանների կուսակցական և պետական հիմնարկների աշխատանքի, խորհրդային իշխանության նկատմամբ հասարակության տրամադրությունների, տարաբնույթ պաշտոնական չարաչափումների և առհասարակ՝ ընհանուր քաղաքական իրավիճակի մասին: Իսկ կոմունիստական կուսակցության մեջ ընդունված կուսակցական բարոյականության ընկալումների պարզաբանման տեսանկյունից մեծ կարևորություն է ստանում 1989 թ. Մոսկվայում լույս տեսած աշխատությունը¹⁷, որը կարևոր տեղեկություններ է հաղորդում կուսակցության ներսում էթիկայի հարցերին նվիրված բանավեճի և տարաբնույթ քննարկումների մասին:

Հիմք ընդունելով առօրեականության պատմության ուսումնասիրությունների մեջ որոշակի խումբ կազմող սկզբնաղբյուրների՝ պատմական և անձնական հուշերի, հուշագրությունների կարևորությունը՝ ատենախոսության մեջ օգտագործվել են նաև Խիկար Բարսեղյանի հուշագրությունը¹⁸, հայ հեղափոխական Գևորգ Աթաբեկյանի եղբոր՝ Լիպարիտ Աթաբեկյանի հուշերը¹⁹, Կլարա Ցետկինի հուշերը²⁰ Կլադիմիր Լենինի մասին և վանաձորցի մանկավարժ Խաչիկ Սահակյանի անձնական հուշերը²¹:

Ատենախոսության մեջ օգտագործվել են նաև արխիվային փաստաթղթեր, որոնք կարելի է դասակարգել երկու խմբի: Առաջին խումբ նյութերը վերաբերվում են Հայաստանում կոմկուսի վերահսկիչ հանձնաժողովի (ԿԿՀ) գործունեությանը: Այս նյութերը շատ կարևոր են Հայաստանում կուսակցական էթիկայի նորմերի և դրանց ազդեցությունների բացահայտման համար: Երկրորդ խմբի մեջ ընդգրկված են հիմնականում ազգաբնակչության դիմումները, բողոքները, նամակներն ու մատնագրերը, որոնք պարզապես անփոխարինելի են 1920-1930-ականների պատմական բարդ ու հակասական ժամանակաշրջանի ոգու արտահայտման տեսանկյունից: Ազգաբնակչության շրջանում տարաբնույթ տրամադրություններն արտահայտող այս փաստաթղթերի նշանակությունը չափազանց մեծ է պետություն-հասարակություն փոխհարաբերությունների ուսումնասիրության համար:

Օգտագործվել են նաև պարբերական մամուլի մի շարք հրատարակումներ: Փորձ է արված սկզբնաղբյուրների հետ աշխատանքում պահպանել քննադատական, վերլուծական մոտեցումները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային շարվածքի 152 էջ:

Ներածության մեջ հիմնավորվում են թեմայի արդիականությունն ու գիտական նորույթը, ներկայացվում են հեղինակի առջև դրված նպատակներն ու

¹⁷ Партийная этика (документы и материалы дискуссии 20-х годов), под ред. А. А. Гусейнова и др., Москва, 1989.

¹⁸ Բարսեղյան Խ., Այսպես արեցին, Երևան, 1984:

¹⁹ ՀԱԱ, ֆ. 1021, ց. 22, գ. 30:

²⁰ Цеткин К., О Ленине (сборник статей и воспоминаний), Москва, 1933.

²¹ Հարցազրույց թղչակառու մանկավարժ Խ. Սահակյանի հետ, 02. 07. 2012 թ., հեղինակի անձնական արխիվ:

խնդիրները, տրվում է թեմային առնչվող սկզբնաղբյուրների և գրականության տեսությունը:

Առաջին գլուխը՝ «ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԷԹԻԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԻԲՐԵՎ ԱՌՕՐԵԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՂԱՂՈՒՉՆԵՐ», բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Առօրեականության պատմությունը որպես պատմագիտական ուսումնասիրությունների արդի ուղղություն» ներկայացված է առօրեականության հիմնախնդիրը պատմագրության մեջ: Հաշվի առնելով ռուսական և արևմտյան պատմագրության հարուստ փորձը պատմագիտական ուսումնասիրությունների այս ուղղության զարգացման մեջ՝ այստեղ ներկայացված են առօրեականության պատմությանը զբաղվող մի շարք առաջատար մասնագետների գիտական մոտեցումները առօրեականության հիմնախնդրին: Լուսաբանված է առօրեականության հիմնախնդիրը հետևյալ առանցքային հարցադրումների համատեքստում. ա) ի՞նչ պետք է հասկանալ առօրեականությունն ասելով, բ) ի՞նչ է ուսումնասիրում առօրեականության պատմությունը:

Ինչ վերաբերվում է այն հարցին, թե որն է առօրեականության պատմության կոնկրետ ուսումնասիրության առարկան, այստեղ առկա են տարաբնույթ տեսակետներ: Շատերը գտնում են, որ առօրեականության հիմնախնդիրները պետք է լուսաբանվեն արտադրական հարաբերությունների ոլորտում, մյուսները հակված են կարծելու, որ առօրեականության պատմության ուսումնասիրությունները պետք է ընդգրկեն նաև ընտանիքին, կենցաղին, մարդկանց կյանքի պայմաններին, բազմազան պահանջումներին և այլ պահանջումները բավարարելու հնարավորություններին վերաբերող հարցեր:

Պատմաբան Մ. Մ Կրոմը ռուսական և եվրոպական պատմական գրականության մեջ առօրեականության պատմությանը վերաբերող մի շարք ուսումնասիրությունների վերլուծության հիման վրա եկել է այն եզրակացության, որ պատմաբանները գրում են առօրեականության պատմություն՝ չբացատրելով առօրեականությունն երևույթը: «...Բայց ամենամեծ գաղտնիքը շարունակում է մնալ «առօրեական կյանքը»: Թե ինչ է սա, պատմաբանները չեն բացատրում՝ երևի ընդունելով այն ինքն իրեն ենթադրվող ինչ որ բան», նշում է հեղինակը²²: Հեղինակի այս մտահոգությունն ինքնին հասկանալի է, սակայն պետք է նշել, որ առօրեականության հստակ, ամբողջական ձևակերպման կամ բնորոշման բացակայությունը արգելք չի հանդիսանում նշված ուղղության պատմական նոր ուսումնասիրությունների ստեղծման համար: Առօրեականության գիտական հիմնախնդրի շուրջ ձևավորված այս անորոշությունը գալիս է ոչ թե հիմնախնդրի գիտական սնանկությունից, այլ, ընդհակառակը, բազմաբովանդակությունից, այսինքն՝ առօրեականությունը ուսումնասիրության առարկա է հանդիսանում տարբեր գիտությունների համար, այդ իսկ պատճառով նրա ձևակերպումը հնարավոր չէ տեղավորել մեկ միասնական գիտական հայեցակարգի մեջ: Եթե սոցիոլոգի համար առօրեականությունը ենթադրում է գիտական մյուսի և ուսումնասիրությունների մի շրջանակ, ապա դրանց նկատմամբ մոտեցումները բոլորովին այլ են մարդաբանի, պատմաբանի, քաղաքագետի կամ հնագետի համար: Որպես կանոն, պատմագիտական ուսումնասիրությունների մեջ հանդիպում ենք ոչ թե առօրեականություն, այլ «առօրեականության

²² <http://old.eu.spb.ru/reset/files/krom.pdf.>:

պատմություն» ձևակերպմանը, և սա պայմանավորված չէ միայն առօրեականությունը պատմական գիտությանը համապատասխանեցնելու մտայնությամբ: Թե ինչու է առօրեականության պատմությունը դարձել պատմագիտական ուսումնասիրությունների ուղղություն, Մ. Ս. Կրոնը բացատրում է՝ մեջբերելով գերմանացի գիտնական Ալֆ Լյուդկեի այն տեսակետը, որի համաձայն՝ «...«առօրեականության պատմություն» տերմինը հեռու է կատարյալ լինելուց, պարզապես այն օգտագործվում է դրանից լավը չլինելու պատճառով: Բայց և այնպես այդ անվանումն արդարացնում է իրեն՝ որպես ամենակարճ և բովանդակալից ձևակերպում՝ ուղղված պատմագիտության մեջ ընդունված այն ավանդույթի դեմ, որը բացառում է առօրեականությունն իր տեսադաշտից»²³:

Պատմաբան Նատալյա Պուշկարյովան նշում է, որ առօրեականություն ասելով պետք է հասկանալ

ա) հասարակական առօրեական կյանքի իրադարձային ոլորտը՝ առաջին հերթին մանր, մասնավոր բնույթի իրադարձությունները, մարդկանց՝ արտաքին աշխարհի իրադարձություններին հարմարվելու ձևերը,

բ) անձնական, մասնավոր կյանքի հանգամանքները, կենցաղը ամենալայն իմաստով,

գ) իրադարձությունների և երևույթների էմոցիոնալ կողմը, առանձին մարդկանց կամ խմբերի կողմից առօրեական փաստերի և կենցաղային հանգամանքների հետ կապված ապրումները²⁴: Այս տեսակետը, սակայն, խիստ միակողմանի է դարձնում առօրեականության պատմության գիտական ընկալումը՝ այն սահմանափակելով միայն մասնավոր, կենցաղային իրադարձությունների մեջ: Սա է պատճառը, որ անձնական կյանքի, մասնավոր բնույթի իրադարձությունների լուսաբանման բացառիկ անհրաժեշտությունը վիճարկվում է առօրեականության պատմության այլ մասնագետների կողմից: Նրանցից, օրինակ, Ի. Բ. Օշլովը նշում է. «...Բայց առօրեականության և կենցաղի հետազոտությունների միջև սկզբունքային տարբերությունը կայանում է նրանում, որ առաջին դեպքում հետազոտողի ուշադրության կենտրոնում ոչ թե կենցաղն է, այլ կենսական խնդիրները, և ուսումնասիրվող իրադարձությունների մասնակիցների կողմից դրանց իմաստավորումը: Այլ խոսքերով՝ եթե ազգագրագետը վերականգնում է կենցաղը, ապա առօրեականության պատմաբանը վերլուծում է մարդկանց էմոցիոնալ արձագանքներն այն ամենին, ինչով շրջապատված է նրանց կենցաղը՝ իր ուշադրությունը կենտրոնացնելով մարդկանց անհատական կենսափորձի վրա»²⁵: Այսպիսով, եթե Ն. Պուշկարիովայի մոտ կենցաղը դառնում է պատմագիտական ուսումնասիրության ուղղակի օբյեկտ, ապա Ի. Օշլովին հետաքրքրում են միայն կենցաղային հանգամանքներին մարդկանց էմոցիոնալ արձագանքները:

Մեկ այլ պատմաբան՝ Օլեգ Լեյբովիչը, ուշ ստալինյան ժամանակաշրջանին պատկանող մի շարք արխիվային փաստաթղթերի, հատկապես՝ կուսակցական առաջնորդներին գրված նամակների ուսումնասիրության հիման վրա գալիս է

²³ Նույն տեղում:

²⁴ http://www.perspektivy.info/history/istorija_povsednevnosti_kak_napravlenije_istoricheskikh_issledovanij_2010-03-16.htm.

²⁵ Орлов И., Советская повседневность: исторический и социологический аспекты становления, издательский дом Государственного университета – Высшей школы экономики, Москва, 2010, с. 8.

այն եզրակացության, որ ստալինյան ժամանակաշրջանում խորհրդային քաղաքացիները զրկված էին մասնավոր կենսատարածքից, հետևաբար նրանց կյանքն առավել հանրային բնույթ էր կրում, իսկ այդ կյանքում շատ կարևոր տեղ էր զբաղեցնում կուսակցական գաղափարախոսությունը: Լեյբովիչն անընդունելի է համարում խորհրդային առօրեականության պատմության սահմանափակումը կենցաղային կյանքի մեկուսի նկարագրություններում, որովհետև, ըստ նրա, խորհրդային մարդկանց կենցաղը, կյանքն ընդհանրապես կախված էր պետության և իշխող կուսակցության քաղաքական վճիռներից:

Խորհրդային առօրեականության պատմության ուսումնասիրողներից հայտնի են նաև Շեյլա Ֆիցպատրիկը և Նատալյա Պլոտիչկինան: Ֆիցպատրիկը 1930-ական թթ. խորհրդային առօրեականությանը վերաբերող իր հայտնի աշխատություններում²⁶ խորհրդային առօրեականությունը ներկայացնում է երկրի քաղաքական կյանքի հետ առնչություններով՝ փորձելով բացահայտել ստալինիզմի քաղաքականության հարուցած դժվարություններին մարդկանց հարմարվելու ձևերը:

Նատալյա Պլոտիչկինան, կարևորելով քաղաքական իրողությունների դերը առօրեականության մեջ, հանգում է քաղաքական առօրեականության գաղափարին²⁷՝ քաղաքականությունը ներկայացնելով որպես յուրօրինակ առօրեականություն: Ստացվում է, որ առօրեականությունը հասարակական կյանքի որոշակի հարթության մեջ դառնում է քաղաքականություն: Իսկ այդ հարթությունը երկրի քաղաքական կյանքն է՝ իր բազմազան կառուցակարգերով, քաղաքական ինստիտուտներով, քաղաքականության տարաբնույթ դրսևորումներով: Սրանցից յուրաքանչյուրի հետ անհատի առնչությունը տարբերվում է այդ նույն անհատի՝ սեփական անձնական, մասնավոր տարածքում ունեցած շփումներից և իր ներքին հոգեբանական պատճառաբանվածությամբ, և՛ վարքագծի ընտրված դրսևորումներով: Կարճ ասած՝ անհատը նույնը չէ կենցաղում և իշխանության մարմինների հետ հարաբերություններում: Եթե առաջին դեպքում նրա վարքագծի մեջ կարելի է դիտարկել ինքնաբուխ մղումներ, ապա երկրորդ դեպքում նա օգտագործում է որոշակի մարտավարություն, նրա վարքագիծը պայմանավորված է լինում պետական մարմինների հետ հարաբերվելու գիտակցված մեխանիզմներով: Անհատների և իշխանության մարմինների միջև հարաբերությունները, բնականաբար, տարբեր են, և այստեղ որոշիչ նշանակություն ունեն նաև պետական կառավարման համակարգի առանձնահատկությունները: Այս առումով առօրեականության պատմության հիմնախնդրի համակողմանի ուսումնասիրության համար չափազանց կարևորվում է պետություն-հասարակություն փոխհարաբերությունների, մարդկանց՝ պետական մարմինների հետ շփումների հարցը, քաղաքականությունը դիտարկվում է որպես առօրեական կյանքում և մասնավոր հարաբերություններում առկա գործոն:

Երկրորդ ենթազխում՝ «Կուսակցական էթիկան խորհրդային Հայաստանի առօրեականության համատեքստում» ներկայացվում են կոմունիստական կուսակցության հիմնական մոտեցումները բարոյականությանը վերաբերող հարցերին:

²⁶ Фицпатрик Ш., Повседневный сталинизм. Социальная история Советской России в 30-е годы: город., Москва, 2001, Его же; Сталинизм крестьяне. Социальная история Советской России в 30-е годы: деревня., Москва, 2001.

²⁷ Плотицына Н., Город, как пространство политической повседневности, Человек. Сообщество. Управление, 2012, № 1.

1920-ական թթ. հիմնականում ձևավորվեցին կոմունիստի բարոյական ընդունելի նկարագրին ներկայացվող չափորոշիչները՝ ի դեմս համեստության, կոլեկտիվ մտածողության, քաղաքական գրագիտության, կուսակցական գործունեության մեջ հեղափոխության և կուսակցության գործին նվիրվելու պատրաստականության: Կուսակցական գաղափարախոսությամբ քննադատվեցին կուսակցական մարմիններում տեղ գտած արատավոր երևույթները՝ բանարկությունները, կուսակից ընկերների մատուցումները, անհիմն մեղադրանքները, խմբակայնությունը, պետական միջոցների վատնումը, շռայլությունները և այլն: Սակայն վարքագծի և մտածողության նորմեր թելադրող այն արժեքները, որոնք ներմուծվում էին կուսակցականի գիտակցության մեջ չի կարելի համարել բարոյական բառիս բացարձակ իմաստով, որովհետև կոմունիստական բարոյականությունը, այսպես ասած, «կուսակցական առաքինությունների» համակցություն էր՝ նպատակաուղղված կոմկուսի իշխանության հաստատմանը և ամրապնդմանը: Կոմունիստները բարոյականությունը մեկնաբանում էին այսպես. «Մեր բարոյականությունը ելնում է պրոլետարիատի դասակարգային պայքարի շահերից: Եվ մենք մեր կոմունիստական բարոյականությունը ենթարկում ենք այդ խնդրին: Մենք ասում ենք՝ բարոյականությունն այն է, ինչը որ ծառայում է հին, շահագործողական հասարակության խորտակմանը և բոլոր աշխատավորների՝ պրոլետարիատի շուրջը համախմբելուն, պրոլետարիատի՝ որը կոմունիստների նոր հասարակություն է ստեղծում»²⁸:

Բարոյականության մեկնաբանումը սոցիալիստական և բուրժուական գաղափարախոսությունների միջև պայքարի դիրքերից հնարավորություն է տալիս դրա իմաստավորման կենտրոնում տեսնել այդ պայքարը և սոցիալիզմի հաղթանակի համար կիրառված մեթոդները նույնպես համարել բարոյական: Սա կոմունիստական բարոյականության կարևոր ուղեցիչ էր 1920-ական թթ.: Երբ ամենամեծ բարոյականությունը համարվում էր հեղափոխության գործին ծառայելը: Ըստ այդմ՝ բոլշևիկների քաղաքական գործունեության հոգեբանական շարժառիթների համար ելակետային արժեք էր ոչ թե մարդկային, այլ «հեղափոխական» խիղճը, որի թելադրանքով կատարված գործողությունները, անգամ ահաբեկչությունը, կարող էին դիտվել բարոյական: Կուսակցության գաղափարախոսները, հենվելով կուսակցական էթիկայի լենինյան պատկերացումների վրա և արժևորելով կոմունիստին անհրաժեշտ մարդկային, բարոյական որակները, փորձում էին գնահատել այն սոցիալական պայմանները, որոնք փորձադաշտ կարող էին հանդիսանալ ապագա կոմունիստի համար: «Կարևոր էր գտնել սոցիալական «մաղը», որ կօգներ ընտրել մարդկանց՝ այդ հազվագյուտ բարոյական որակներով: Մինչև հեղափոխությունն այդպիսի «մաղ» էր հանդիսանում հենց կուսակցության օբյեկտիվ կարգավիճակը, որն ուղեկցվում էր ոստիկանական հետապնդումների, բանտային պատերի և տաժանակրության անընդհատ վտանգով, ինչը կուսակցության շարքերն ընդունվողից պահանջում էր բացառիկ ինքնամվիրում, անշահախնդրություն, իսկական հերոսություն»²⁹:

1920-ականների վերջին կուսակցական բարոյականության մասին ընկալումները որոշակի փոփոխություններ կրեցին: Սա պայմանավորված էր այն հանգամանքով, որ Հայաստանում ավելի էր ամրապնդվում կոմունիստական

²⁸ «Ավանգարդ», № 67, մայիսի 10, 1936, էջ 2:

²⁹ Партийная этика (документы и материалы дискуссии 20-х годов), под ред. А. А. Гусейнова и др., Москва, 1989, № 5.

կուսակցության մենաստիությունը, և չկային այլևս այն սոցիալ-քաղաքական պայմանները, որոնք ծնունդ էին իսկական հեղափոխականներ: Նոր սերնդի բոլշևիկների առջև ծառայած էին նոր խնդիրներ, և դրանց լուծման համար նրանց անհրաժեշտ էին նոր որակներ՝ պետական շինարարության և սոցիալ-տնտեսական քաղաքականության մեջ կազմակերպչական, ղեկավար հատկանիշներ դրսևորելու ունակություններ: Այդ իսկ պատճառով կուսակցական նոր կադրերի մեջ շատ հաճախ բացակայում էր հեղափոխական սկզբունքայնությունը, և քիչ չէին դեպքերը, երբ կուսակցության շարքերը համալրվում էին մարդկանցով, ովքեր պարզապես ցանկանում էին վեր բարձրանալ պաշտոնական սանդուղքով: Այս մտայնությունը բացասական էր անդրադառնում նաև նրանց կուսակցականի բարոյական նկարագրի վրա, կուսակցական կյանքում նկատվում էին բացասական երևույթներ: Այս երևույթների դեմ կուսակցության մոտեցումները միակողմանի էին, որովհետև շատ հաճախ գնահատվում էր ոչ թե արարքը, այլ արարքը թույլ տված կոմունիստի սոցիալական ծագումը: Որպես կանոն, դասակարգային մոտեցումները էթիկայի նորմերի արժևորման ժամանակ կոմկուսի համար միշտ էլ մնում էին առաջնային:

Սոցիալիստական հասարակության մեջ ընտանիքի դերի և նշանակության, ընտանեկան հարաբերությունների բարոյական արժևորման հարցերը կոմունիստական կուսակցության համար նույնպես եղել են հայեցակարգային: Կոմունիստները մերժեցին «ազատ սիրո» գաղափարը և հանդես եկան ընտանիքում առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի ստեղծման դիրքերից: Ընտանիքի պահպանման, պաշտպանության պատասխանատվությունը դրվեց ոչ միայն ամուսինների, այլ նաև կոլեկտիվի վրա, որը հասարակական պարսավանքի, առողջ քննադատության միջոցով, փաստորեն, մասնակցություն էր ունենում ընտանեկան հարցերի քննարկմանը, կուսակցականների ընտանեկան կյանքին: Կուսակցական գաղափարախոսությամբ ամրագրված էթիկայի նորմերը պարտադրվում էին անգամ մասնավոր բնույթի հարաբերություններում: Կոմունիստի վարքը պետք է օրինակելի լիներ ոչ միայն ժողովներում, պաշտոնական, աշխատանքային միջավայրում, այլ նաև ընտանիքում: Կուսակցական բարոյականության կարևորագույն չափանիշներից մեկը համարվում էր հավատարմությունն ընտանեկան արժեքներին, բարոյական անհարիր պահվածքը կարող էր կուսակցականին արժենալ նրա կուստոմսը, պաշտոնը, անգամ՝ ազատությունը: Այսօրինակ հարաբերություններում գնահատվում էր չափավորությունը, ժուժկալությունը: Չնայած եկեղեցու և քրիստոնեական արժեհամակարգի նկատմամբ անվերապահ անհանդուրժողականությանը՝ պետք է փաստել, որ կուսակցությունը ամուր ընտանիքների կողմնակից էր, և բացասական վերաբերմունք էր արտահայտում ընտանիքները լքող, արտասանունական կապերի մեջ մտնող կուսակցականների հանդեպ:

Այստեղ կոմկուսն առաջնորդվում էր բացահայտ երկակի չափանիշներով, որովհետև գոյություն ունեցող «պրոլետարական ընտանիքի» մոդելը ենթադրում էր դասակարգային ընդունելի նկարագրի կուսակցականի ընտանիքի համար, այսինքն՝ ընտանիքի անդամները պետք է ունենային պրոլետարական դասակարգային գիտակցություն և ծագում: Ընտանեկան հարաբերությունների համար ուղենիշ հանդիսացող «Իր անձնական կյանքում կոմունիստը պետք է առաջնորդվի կոմունիզմի շահերով» կարգախոսն, ըստ էության, նշանակում էր, որ կուսակցությանը ոչ ձեռնտու ամուսնական կապերը անթույլատրելի էին: Երբ

դասակարգային պայքարի դրոշի ներքո կուսակցությունն առավել խստացրեց իր քաղաքականությունը տարբեր տեսակի «հակադասակարգային տարրերի» դեմ «կուլակներ», «դաշնակներ», «տրոցկիստներ», «ժողովրդի թշնամիներ», այս պիտակավորումներին արժանացած մարդիկ համարվեցին իրենց ընտանիքի կոմունիստ անդամների դասակարգային թշնամիներ, որոնց դեմ կուսակցությունն անգիջում պայքար էր պահանջում: Արդյունքում՝ մարդկանց առօրեական կյանքում տեղի ունեցան հիրավի ողբերգական շրջադարձեր, երբ շատերը ստիպված էին լինում հրաժարվել իրենց ընտանիքի անդամներից, իրենց հարազատներից: Այստեղ ամուր ընտանիքի կուսակցական պահանջներն արդեն չէին գործում: Այս գործընթացների հիմնական նպատակն, ըստ էության, հանրային գիտակցության վերահսկման և ուղղորդման իրականացումն էր այդ գիտակցության ձևավորման ամենասկզբնական միջավայրում՝ ընտանիքում:

Երրորդ ենթագլխում՝ «Քաղաքական գրագիտության դերը կուսակցական կյանքում» քաղաքական գրագիտությունը ներկայացվում է իբրև կոմունիստին բնութագրող անձնական որակ, իբրև նրա կուսակցական և պաշտոնական առաջընթացի կարևոր նախապայման, նաև՝ իբրև նրա բարոյական հասունության կարևոր ցուցիչ:

1920-ականների սկզբին ձեռնարկված ակտիվ միջոցառումները Խորհրդային Չայաստանում անգրագիտության վերացման ուղղությամբ զուգորդվեցին նաև քաղաքական անգրագիտության վերացմանն ուղղված քայլերով: Կազմակերպվում էին քաղուսուցման պարապունքներ, ակտիվ քարոզչական աշխատանք էր տարվում կուսակցականների շրջանում:

Կուսակցության կողմից քաղաքական գրագիտության արժևորումը պայմանավորված էր նրանով, որ իր քաղաքական գծի նկատմամբ հանրային դրական դիրքորոշում ունենալու համար կոմկուսը պետք է վերահսկողություն ունենար հանրային գիտակցության նկատմամբ, և քաղաքական գիտելիքների այն ամբողջությունը, որը հրամցվում էր կուսակցության կողմից, պետք է դառնար այդ գիտակցության ձևավորման առաջնային գործիք: Քաղաքական գիտելիքները, բնականաբար, չունեին կուսակցականի մոտ ինքնուրույն քաղաքական աշխարհայացքի ձևավորման նպատակ, որը հնարավորություն կտար սեփական վերաբերմունքն արտահայտել տիրող քաղաքական համակարգի մասին, վերլուծել այն, մեկնաբանել սեփական հայեցողությամբ: Քննարկվող ժամանակաշրջանի քաղաքական գիտելիքները, որոնք առավելապես արտահայտվում էին մարքսիզմ-լենինիզմի տեսական դրույթներով, կուսակցության՝ հասարակական-քաղաքական կյանքում ունեցած անփոխարինելի դերի, պետական և կուսակցական շինարարության մասին պատկերացումներով, հանգում էին մեկ միասնական, անքննարկելի, անբեկանելի հայեցակարգի՝ կուսակցական գծի գովերգման: Յետևաբար՝ սրանք ձևավորվում էին ոչ թե երկրի քաղաքական իրավիճակից բխող օբյեկտիվ գնահատականներից, պատկերացումներից, այլ կուսակցական քարոզչության պտուղն էին, նրա անմիջական հետևանքը: Սա են վկայում, օրինակ, քաղուսուցման խմբակներում կազմակերպվող պարապունքները, որոնք իրենցից ներկայացնում էին կուսակցական քարոզիչների զեկուցումներ և զեկուցման նյութի վերաբերյալ գնահատականներ, որոնք, որպես կանոն, չպետք է տարբերվեին կուսակցության կանխանշած դիրքորոշումներից: Ձեկուցման նյութ էին հանդիսանում կուսակցական համագումարների որոշումները, մարքս-լենինյան ուսմունքի տեսական դրույթները, կուսակցական և պետական կյանքի մշակակալից իրադարձությունները և այլն:

Քաղուսուցման պարապունքների գաղափարականացված մթնոլորտն ավելի ցայտուն դրսևորվեց հատկապես անհատի պաշտամունքի տարիներին: Քաղուսուցման ընդհանուր տրամաբանությունը հանգում էր մեկ սկզբունքի՝ նա ով «մտածում էր այնպես, ինչպես կուսակցության հանճարեղ առաջնորդը (իմա՝ Ի. Ստալինը-Գ.Ժ)», քաղաքականապես ավելի գրագետ էր համարվում, քան նա, ով կարող էր իր սեփական պատկերացումներն ունենալ քաղաքական իրողությունների վերաբերյալ: Վերջինը համարվում էր «հակակուսակցական տարր», «օպորտունիստ» և այլն:

Քաղ ուսուցման պարապունքներին, որպես կանոն ավելի շատ մշակվում էր կուսակցական թեզերի, պնդումների, առհասարակ՝ գաղափարախոսության շուրջ ծավալվելիք հռետորաբանությունը, որն այնքան անհրաժեշտ էր պրոպագանդիստին իր աշխատանքում: Կարճ ասած՝ քաղաքական հասունության գլխավոր ցուցիչը կուսակցական գաղափարախոսության մարտումն էր, որը դրսևորվում էր կուսակցական հռետորաբանությամբ: Կուսակցական հռետորաբանության տակ հասկանում ենք կուսակցական քաղաքականության վերաբերյալ վաղօրոք մշակված ստանդարտ ձևերայումների, նույնանման կարծիքների, գաղափարների և կարգախոսների ամբողջությունը, որոնք հաճախակի շահարկվում էին կուսակցական քարոզիչների կողմից: Այս համատեքստում քաղաքականապես հասուն կոմունիստի խորհրդանշական կերպար էր դառնում կուսակցության քարոզիչը (պրոպագանդիստ, ագիտատոր): Սա է պատճառը, որ կոմունիստները մշտապես ձգտում էին բարձրացնել իրենց քաղաքական գրագիտության մակարդակը:

Կոմունիստի քաղաքական հասունությունը, բացի քաղուսուցման խմբակները, ստուգվում էր նաև կուսակցական ժողովներում, որոնց ակտիվ մասնակցությունը պարտադիր էր կուսակցական աշխատանքում: Կուսակցական ժողովներում քննարկվող հարցերը բազմազան էին: Տեղական կուսկազմակերպությունները, որպես կանոն, քննարկում էին իրենց տարածաշրջանում տեղական նշանակություն ունեցող հարցեր՝ քարոզչական աշխատանքի մակարդակը, պատի թերթի վիճակը, խրճիթ-ընթերցարանների հաճախելիությունը, դրանց վիճակը, առանձին կոմունիստների ձեռքբերումները տարբեր ոլորտներում, նրանց թերացումները և այլն: Հաճախ քննարկման առարկա կարող էին հանդիսանալ նաև մասնավոր բնույթի հարցեր՝ կուսակցականի վարքը ընտանիքում, մարդկանց հետ շփումներում և այլն: Սակայն, հաշվի առնելով խորհրդային հասարակության առանձնահատկությունը, հատկապես կուսակցական ամբողջատիրության հաստատումից հետո (1929 թ.) հանրապետության անգամ տեղական կուսակցական կազմակերպություններում կուսժողովների օրակարգում ընդգրկվում էին համապետական և համակուսակցական նշանակության հարցեր՝ այս ժողովներում հնչող գնահատականներին և որոշումներին տալով արձանագրային նշանակություն:

Երկրորդ գլխում՝ «ԿՈՒՄՍՎՍԱԿԱՆ ԲՅՈՒՐՈՎԿՐԱՏԻՋՍԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅՄԱՍՆԱՆԻ ԱՌՕՐԵՎԱՍՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ», բյուրոկրատիզմի հիմնական դրսևորումները ներկայացվում են իբրև առօրեական իրողություններ: Խորհրդային քաղաքացիների և կուսակցական պետական մարմինների ընկալումներում բյուրոկրատիզմը ստանում էր հավաքական իմաստ՝ նույնացվելով պետական-կուսակցական պաշտոնյաների կողմից թույլ տրվող այլ չարաշահումների հետ՝ հովանավորչություն և խնամիություն, պաշտոնական դիրքի չարաշահումներ, պաշտոնյայի ամբարտապան կեցվածք, կոպտություն և այլն: Դրանք

լուսաբանվում են առավելապես ազգաբնակչության դիմում-բողոքներում, նամակներում, որոնց մեջ արտահայտված է նաև այս երևույթների նկատմամբ ազգաբնակչության զգայական վերաբերմունքը:

Կուսակցական բյուրոկրատիզմը կոմկուսի կողմից դիտվում էր որպես պետական ապարատի թերություն, որպես մեծագույն բացթողում պետական շինարարության մեջ: Կուսակցական զեկուցագրերում, բարձրաստիճան կոմունիստների ելույթներում, ճառերում բյուրոկրատիզմը դիտվում էր որպես չարիք, որի դեմ պարտավոր էր պայքարել յուրաքանչյուր գիտակից կոմունիստ: Կուսակցության քարոզչամեթոդն ձգտում էր հանրային գիտակցության մեջ ամրակայել այն թեզը, ըստ որի բյուրոկրատիզմը խոչընդոտ էր հանդիսանում պետության և հասարակության միջև, որ այն միանգամայն խորթ և անթույլատրելի երևույթ էր կուսակցական կյանքում: Սակայն իրականում բյուրոկրատիզմը անխուսափելի երևույթ էր՝ ինչը պայմանավորված էր պետական շինարարության ոլորտում կառավարման վարչահրամայական մեթոդների կիրառմամբ: Խորհրդային բյուրոկրատիան իրականում կուսակցական մեթոդային մի մասնիկն էր, նրա պարտադիր մասնիկը, որի ստեղծումը կուսակցության նախաձեռնությունն էր և անհարժեշտ էր երկրում գործող բազմաթիվ արդյունաբերական մեծ ու փոքր հիմնարկությունները, պետական խճճված ապարատը արդյունավետ կառավարելու համար: Սա էր պատճառը, որ կուսակցության պայքարը բյուրոկրատիզմի դեմ ունեցավ արտաքին ազդեցության նշանակություն, քանզի չվերացավ բյուրոկրատիզմի կլանային բնույթը:

Չասարակությունը բյուրոկրատիզմի դոսևորումներին փորձում էր հակադրել դիմակայելու առօրյա մարտավարություն, որն արտահայտվում էր այլընտրանքային մոտեցումներով իշխանության մարմինների հետ հարաբերություններում: Տարածված էր, օրինակ, կեղծ տեղեկանքների ձեռքբերումը, հիմնարկի ղեկավար մարմիններում հովանավորներ գտնելը և այլն: Ամենատարածված միջոցը, որին մարդիկ դիմում էին, «չքավոր» կարգավիճակ ստանալն էր:

Երրորդ գլխում՝ «ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԵՏԱՊԵՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԲՈՆԱՃՆՇՈՒՄՆԵՐԻ ԱՋԴԵՅՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՄՍԱԿՑԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՐՈՅԱՂՈՒԹԵՔԱՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՎՐԱ», երկայացվում են ահռելի ազդեցությունները, որ ներկուսակցական կյանքի վրա ունեցան 1936-1938 թթ. կիրառված քաղաքական հետապնդումները:

Կոմկուսի ներսում քաղաքական պայքարը, որ չէր դադարել սկսած 1924 թ., 1930-ականների սկզբին թևակոխեց նոր, վճռական փուլ: Սա այն ժամանակաշրջանն էր, երբ կուսակցության առաջնորդ Ի. Ստալինի անձի պաշտամունքի հաստատումից հետո սկսվեց նրա քաղաքական հակառակորդների հետևողական և զանգվածային ոչնչացումը: 1936-37 թթ. այս գործընթացն ուղեկցվեց քաղաքական լայնամասշտաբ հետապնդումներով, որոնց հորձանուտի մեջ հայտնվեց ամբողջ հասարակությունը: Ծավալված քաղաքական բռնաճնշումները դարձան կոմունիստական ամբողջատիրության բացասական կողմերի խտացումը՝ իրենց բացառիկ դաժանությամբ և հասարակական լայն ընդգրկվածությամբ դառնալով միլիոնավոր խորհրդային մարդկանց ճակատագրերի խեղճան, հասարակության բարոյալքման պատճառ: Քաղաքական բռնաճնշումների արձագանքներն արտահայտվեցին ամբողջ հասարակության մեջ, բոլոր մարդիկ՝ անկախ իրենց կուսակցական կան դասակարգային պատկանելությունից, զբաղեցրած դիրքից և իրենց մասնագիտությունից, կրեցին իրականացված աննախադեպ քաղաքական հետապնդումների և բռնաճնշումների ազդեցությունը:

Խորհրդային Չայաստանը նույնպես չխուսափեց այս իրողություններից: 1936 թ. հուլիսի 9-ին ՀԿ(Բ)Կ կենտրոնի առաջին քարտուղար Աղասի Խանջյանի սպանությունը Չայաստանում լայնածավալ քաղաքական բռնաճնշումների մեկնարկը դարձավ: Ներկուսակցական կյանքն այս ժամանակահատվածում ընթացավ իսկական գոյության կռվի տրամաբանությամբ, կռիվ, որտեղ յուրաքանչյուր կուսակցական, յուրաքանչյուր քաղաքացի ձգտում էր խուսափել անհիմն, հաճախ զավեշտի հասնող մեղադրանքներից, արքայից և գնդակահարությունից: Չայաստանի ազգաբնակչության կյանքը և՛ քաղաքում, և՛ գյուղում անցնում էր համատարած մատնության մթնոլորտում, որը «կուսակցական զգոնությունը պետության չնիհիող թշնամիների դեմ մշտապես պատրաստ պահելու անհրաժեշտության» կեղծ հիմնավորմամբ կուսակցությունը դարձրել էր պարտադիր գործելակերպ բոլորի համար:

Կուսակցական վերնախավը լրջորեն նախապատրաստել էր քաղաքական հետապնդումները, ինչը երևաց դրանց անցկացման ժամանակ կիրառված մեթոդներից: Անգամ երկրի իրավական համակարգը հարմարեցվել էր բռնաճնշումները արդյունավետ իրականացնելուն: Ստացվել էր քաղաքական մեղադրանքներով իրականացվող հետաքննությունների պարզեցված կարգ, դատավճիռներով մեծ մասամբ մշանակում էին ամենածանր պատիժներ՝ առանց բողոքարկման իրավունքի և այլն:

Բռնաճնշումների ժամանակ կուսակցական քարոզչամեքենան աշխատում էր անխափան: Ամենուր կոչ էր արվում փնտրել և «բացահայտել» «ժողովրդի թշնամիներին», «տրոցկիստական լրտեսներին» և այլն: Այն կուսակցականները, որոնք ակտիվություն չէին ցուցաբերի այս հարցում, իրենք կարող էին հայտնվել կասկածյալի կարգավիճակում և, ի վերջո, դատապարտվել: Կոմունիստի կուսակցական բավարար աշխատանքի չափանիշ կարող էր հանդիսանալ այն փաստը, թե քանի մատնագիր է նա ներկայացրել, քանի «ժողովրդի թշնամի» է կարողացել բացահայտել:

Կուսակցական տարբեր գերատեսչություններ կիրառում էին դեռևս բուլճարիկների հեղափոխական գործունեության ժամանակներից կուտակված ընդհատակյա պայքարի փորձը, ինչի արդյունքում հավաքագրվում էին շարքային կուսակցականները՝ իրենց կուսակից ընկերների, բարեկամների, հարազատների մեջ անգամ թշնամիներ բացահայտելու, մերկացնելու համար: Երկրում աշխատում էր մի հսկայական գործակալական ցանց, որի մեջ մտնում էին ոչ միայն պետամվտանգության աշխատակիցները, այլ կուսակցության յուրաքանչյուր անդամ, փաստորեն, կարող էր համարվել գաղտնի գործակալ:

Մեծ տարածում ստացավ հատկապես մատնությունը: Ստորագրված կամ անանուն մատնագրերի պատճառով մարդը կարող էր մի քանի օրում զրկվել իր աշխատանքից, ընտանիքից, ազատությունից: Եվ բոլորովին պարտադիր չէր, որ պետության կամ կուսակցության դեմ որևէ հանցանք գործած լիներ: Որպես կանոն, մատնագրերում շարադրված մեղադրանքների իսկությունը չէր ստուգվում. մարդուն վարկաբեկող նամակի առկայությունն արդեն համարվում էր նրան ձեռքակալելու հիմնավոր պատճառ: Ընդ որում՝ վարկաբեկող նյութերում կարող էին լինել ամենալուրջ մեղադրանքներից (պետական դավաճանություն, լրտեսություն և այլն) մինչև ամենաանհեթեթ մեղադրանքներ (Ստալինի նկարի իջեցնելը տան պատից, կուսակցական առաջնորդների նկարներով գրքի փչացնելը) և այլն: Հատկապես տարածված էր հակահեղափոխական, հակապետական արտահայտությունների համար մարդկանց դատապարտելու

պրակտիկան, ընդ որում՝ այս արտահայտությունները մեկնաբանվում և համապատասխան գնահատականի էին արժանանալու կամայական ձևով:

Ինչպես ԽՍՀՄ-ում, այնպես էլ Խորհրդային Հայաստանում ոչ բոլոր մատուցողներն էին տեղի ունենում կուսակցության անմիջական ցուցումով: Կուսակցական կամ ոչ կուսակցական մարդկանց, սովորական քաղաքացիների անհատական նախաձեռնությունն այս գործընթացի մեջ նույնպես մեծ դեր էր խաղում: Սա բացատրվում էր այն հանգամանքով, որ 1930-ականների երկրորդ կեսին, երբ պետության կողմից սանձազերծվեցին լայնածավալ քաղաքական բռնաճնշումները, մատուցողները դարձավ անձնական խնդիրների լուծման, անձնական շահերի իրականացման բավականին արդյունավետ միջոց: Կուսակցության կողմից հասարակության մեջ անընդհատ քարոզվող կոչերը ժողովրդի թշնամիների հանդեպ «զգոն» լինելու, նրանց բացահայտելու վերաբերյալ, իրականում պարզ ազդանշան էին, որ կուսակցությանը անհրաժեշտ են «ժողովրդի թշնամիներ»: Քաղաքացիների կողմից այն պարզ գիտակցումը, որ հայտնաբերված «ժողովրդի թշնամիները» գործերը սովորաբար օբյեկտիվ քննության չեն ենթարկվում, որ նրանց նկատմամբ գրեթե միշտ կիրառվում են պատժի խստագույն տեսակներ, շատերի մոտ առաջացնում էր անցանկալի մարդուց հեշտությամբ ազատվելու գայթակղություն: Շատերը մատնում էին՝ անձնական վրեժխնդրությունից դրդված, մյուսները կարող էին առաջնորդվել ավելի գործնական շահերով:

Այս ժամանակաշրջանում արժեզրկվեցին կուսակցական բարոյախոսության հենասյուն հանդիսացող գաղափարները կուսակցության մեջ միասնության և խառնակիչների, բանսարկուների, կուսընկերների վարկաբեկողների դեմ անհանդուրժողական պայքարի մասին: Հենց նման հատկանիշները տիրապետող դարձան կուսակցական կյանքում: Նմանատիպ գործողությունները կարող էին արդարացվել, եթե պատճառաբանված էին «հեղափոխական խոճի», «հեղափոխական զգոնության» թելադրանքով: Արդեն 1920-ականներին կուսակցական գիտակցության մեջ ներմուծված այն հիմնադրույթը, ըստ որի կոմունիստի համար բարոյական է այն ամենը, ինչը նպաստում է պրոլետարիատի հաղթանակին և կուսակցական շահերին, 1930-ականների երկրորդ կեսից դարձավ քաղաքական բռնաճնշումների խթանման հզոր ազդակ՝ հիմնովին վերափոխելով կուսակցական բարոյականության մասին պատկերացումները:

Ստալինյան բռնությունները 1938 թ. սկսեցին մարել և ժամանակավորապես դադարեցին, երբ աշխարհը ներքաշվեց երկրորդ աշխարհամարտի մեջ:

ԵԶՐԿՎԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ անփոփոխ է ատենախոսության հիմնական դրույթը, ըստ որի 1920-1930-ական թթ. քաղաքական գործընթացները բացառիկ ներկայացվածություն ունեին Խորհրդային Հայաստանի առօրեական իրողություններում: Ատենախոսության մեջ հետազոտության վերցված երեք գործընթացները՝ կուսակցական էթիկայի նորմերի ամրագրումն ու գործառնությունը, կուսակցական-պետական բյուրոկրատիզմը և քաղաքական հետապնդումները իրենց առօրեական դրսևորումներում հաստատում են նշված հիմնադրույթը:

ա) Կուսակցական բարոյականությունը խիստ գաղափարականացված և քաղաքականացված երևույթ էր: Կուսակցական էթիկայի նորմերը կոմունիստական քարոզչության կողմից սահմանվում էին «կոմունիստին թույլատրվում է այն ամենը, ինչը բխում է կուսակցության շահերից» սկզբունքով: Այս սկզբունքը ցույց է տալիս, որ կուսակցական էթիկան՝ որպես կուսակցական

գաղափարախոսության արգասիք, պայմանավորված էր կոմկուսի քաղաքական նպատակներով՝ վերահսկել հասարակական գիտակցությունը, ստեղծել անվերապահ հեղինակություն հասարակության մեջ: Հետևաբար այն կարևոր քաղաքական գործոն էր կուսակցական մենատիրության հաստատման ճանապարհին: Եվ քանի որ Խորհրդային Հայաստանում կոմունիստական կուսակցությունը միակ իշխող քաղաքական ուժն էր, և նրա անդամների թիվն անընդհատ աճում էր, կուսակցական էթիկայի նորմերը տիրապետող դարձան հասարակական գիտակցության մեջ առկա բարոյական ընկալումներում:

բ) Ընտանիքին և բարոյականությանը վերաբերող հարցերում կոմունիստական կուսակցության որդեգրած քաղաքականությունը տարվում էր «կոմունիստն իր անձնական կյանքում պետք է առաջնորդվի կոմունիզմի շահերով» խիստ քաղաքականացված սկզբունքով, որը բացահայտում է այս հարցում կուսակցության մոտեցումները: Կոմունիստի բարոյական նկարագրի կարևոր հատկանիշ էր նրա վերաբերմունքն իր ընտանիքին և բարոյական չափանիշներին: Այստեղ միանշանակ դատապարտելի էին անպատասխանատու վերաբերմունքը ընտանեկան արժեքների նկատմամբ, բարոյական սանձարձակ պահվածքը, արտասանական կապերը, երեխաներից հրաժարվելը և այլն: Սակայն հանդես գալով առողջ և ամուր ընտանիքի պաշտպանության դիրքերից՝ կուսակցությունն ընտանիքը դիտարկում էր որպես իր գաղափարա-քաղաքական ազդեցության հաստատման յուրօրինակ միջավայր: Ներդրված ընտանիքի մոդելը, որը պայմանականորեն ատենախոսության մեջ ներկայացվում է «պրոլետարական» բնորոշմամբ, ենթադրում էր նաև կոմունիստի ընտանիքում գաղափարական ընդունելի մթնոլորտ, ընտանիքի անդամների պրոլետարական ծագում և գիտակցություն: Սա խոցելի էր դարձնում ընտանեկան կապերի ամրությունը, երբ կուսակցության կողմից տարվող քաղաքականության արդյունքում հասարակության տարբեր շերտերի միջև դրվում էին գաղափարական պատմեղներ: Ընտանիքն, ըստ էության, զրկվում էր իր կարևորագույն հատկանիշից՝ իր մասնավոր բնույթից: Կոմունիստների վարքագիծը ընտանիքում քննարկվում էր կուսակցական ժողովներում, աշխատանքային կոլեկտիվում, ինչը, փաստորեն, շատ հարցերում հանրայնացնում էր ընտանիքը:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում կուսակցության ղեկավարներին ուղարկված բազմաթիվ նամակներն ու դրանցում տեղ գտած անկեղծությունը, իրենց կյանքի մանրամասներով կիսվելու մտայնությունը խոսում են այն մասին, որ կուսակցությունը հանրային գիտակցության մեջ սերմանում էր այն գաղափարը, որ ինքը կանգնած է յուրաքանչյուր կոմունիստի ընտանիքի կողքին և որ նրա ընտանեկան խնդիրների կարգավորման հարցում անգամ կարող է անփոխարինելի դերակատարում ունենալ:

գ) Կոմունիստի անձնական որակների մեջ կարևորվում էր նաև քաղաքական գրագիտությունը: Սակայն այն չէր ենթադրում քաղաքական ազատ դիրքորոշումներ, չէր ձևավորվում կուսակցության և պետության քաղաքականությանը տրվող օբյեկտիվ գնահատականներից (այդպիսիք չկային և չէին կարող լինել կուսակցական մենատիրության պայմաններում), այլ ենթադրում էր միայն կուսակցական գծի պարտադիր գովերգում: Քաղաքական գրագիտության բովանդակությունը կազմում էին մարքս-լենինյան տեսական գաղափարները, կուսակցական կարգախոսները և կուսակցության կողմից մատմանշվող, ձևակերպվող նույնանման մոտեցումները, որոնց յուրացումը համարվում էր կոմունիստի քաղաքական հասունության չափանիշ:

Այլակարծության ամենամանեղ դրսևորումներն իսկ կարող էին արժանանալ խիստ քննադատության և պատժվել:

Կուսակցական մարմինների կողմից մեծ կարևորություն էր տրվում քարոզչական աշխատանքին, և այս համատեքստում մեծ նշանակություն էր ստանում կուսակցական հռետորաբանության յուրացումը: Սրանով էր պայմանավորված կուսակցական քարոզչի (պրոպագանդիստի) բացառիկ դերը ներկուսակցական հարաբերություններում:

դ) Բյուրոկրատիզմը նույնպես պայմանավորված էր պետական և կուսակցական շինարարության ոլորտում կոմունիստական կուսակցության վարած քաղաքականությամբ: Հասարակական գիտակցության մեջ բյուրոկրատիզմը հանդիսանում էր պետական հիմնարկների հետ քաղաքացիների առօրյա շփումներում տեղ գտած այնպիսի հիվանդագին երևույթների հավաքական բնորոշում, ինչպիսիք էին «չինովնիկական» կամայականությունները, բյուրոկրատական քաշքշուկը, խնամիությունը, տեղական պաշտոնյաների կոպտությունը և ամբարտավան կեցվածքը և այլն: Բյուրոկրատիզմը հանդիսանում էր խորհրդային առօրեականության բնորոշ կողմերից մեկը: Այս երևույթի դեմ կոմունիստական կուսակցության միջոցառումներն ունեին դեկլարատիվ բնույթ, ամպտող քննադատությունից այն կողմ չէին անցնում և նպատակ ունեին միայն սովորական քաղաքացիների գիտակցության մեջ ձևավորել պետություն, կուսակցություն և բյուրոկրատիա հասկացությունների տարանջատում: Սակայն իրականում բյուրոկրատիան նույն կուսակցական և պետական համակարգի մի մասն էր, որն արդեն 1930-ականներին ձեռք բերեց տնտեսական ու քաղաքական լծակներ և մեծ ազդեցություն երկրի հասարակական ու քաղաքական կյանքում:

ե) 1936-1937 թթ. կոմունիստական կուսակցության կողմից իրականացված քաղաքական հետապնդումները մեծ ազդեցություն ունեցան հասարակության առօրյա կյանքի վրա: Քաղաքական հսկայածավալ բռնաճնշումներն անցան գաղափարական և քարոզչական լուրջ նախապատրաստություն: Կուսակցական քարոզչամեթոդային ջանքերով վերաիմաստավորվեցին կուսակցական բարոյականության շատ նորմեր: Դեռևս 1920-ականներին շրջանառության մեջ դրված «կուսակցական խիղճ», «հեղափոխական զգոնություն» արտահայտությունները զրկված էին համարժեք բովանդակությունից: Սրանց միջոցով պարզապես արդարացվում էին երկրում մեծ տարածում ստացած բանասարկությունները, սուտ մատուցությունները, կուսակից ընկերների վարկաբեկումը, անհիմն մեղադրանքները և այլն: Արդյունքում՝ հասարակության մեջ ստեղծվել էր վախի և անվստահության մթնոլորտ: Ստեղծված բարոյահոգեբանական հիվանդ վիճակը վերահսկվում և օգտագործվում էր կուսակցության կողմից՝ սեփական քաղաքական շահերին հասնելու համար: Քաղաքական իրադարձությունների անմիջական ազդեցությունները առօրեականության մեջ առավել ցայտուն դրսևորվեցին հենց քաղաքական բռնաճնշումների ժամանակ:

Ամփոփելով նշենք, որ 1920-1930-ական թթ. խորհրդային Հայաստանում կոմունիստական կուսակցության վարած մենատիրական քաղաքականությունը հիմնված էր ոչ միայն երկրում վարչաքաղաքական, տնտեսական լծակների յուրացման, այլ հասարակական գիտակցության վերահսկման վրա: Այս գործընթացն իր ամբողջական դրսևորումներով կարող է որոշակիանալ միայն տվյալ ժամանակաշրջանի առօրեականության պատմության միջոցով, որովհետև ավանդական պատմագրությունը չի անդրադառնում քաղաքական

գործընթացներին հասարակական արձագանքի հիմնահարցին, չի զբաղվում դրա վերլուծությամբ: Սույն ատենախոսությունը փորձ էր հասարակական մտածողության, մարդկանց ապրումների, հույզերի, նրանց գիտակցության մեջ քաղաքական վճիռներին հակադրվելու, ընդունելու կամ դրանք ի սեփական նպաստ օգտագործելու մեխանիզմների ուսումնասիրության, որի միջոցով միայն ամբողջական և, մեր կարծիքով, հիմնավորված է դառնում այն դրույթը, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում հասարակական մտածողությունն այնքան էր քաղաքականացված, որ սովորական մարդիկ իրենց առօրյայից քաղաքականությունը, քաղաքական իրողությունները բացառելու առավել քիչ հնարավորություններ ունեին:

Ատենախոսության մեջ արձարծվող հարցերը կիրառական մեծ նշանակություն են ստանում Խորհրդային Հայաստանի 1920-1930-ական թթ. առօրեականության պատմության ուսումնասիրությունների համար: Բացահայտելով առօրյա կյանքում մասնավոր հարաբերությունների սահմանափակ ինքնավարությունը, իսկ երբեմն դրա բացակայությունը, դրանց անմիջական կախվածությունը քաղաքական գործընթացներից՝ աշխատանքը նոր հնարավորություններ է ընձեռում Խորհրդային Հայաստանի պատմության համապարփակ ուսումնասիրության համար:

Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Առօրեականության պատմության բովանդակությունն ու խնդիրները, «Հայոց պատմության հարցեր» (գիտական հոդվածների ժողովածու), թիվ 13, Երևան, Պատմության ինստիտուտ, 2012, էջ 195-212:
2. Բյուրոկրատիզմի դրսևորումները Խորհրդային Հայաստանում 1920-1930-ական թթ., «Հայոց պատմության հարցեր» (գիտական հոդվածների ժողովածու), թիվ 14, Երևան, Պատմության ինստիտուտ, 2013, էջ 198-210:
3. Партийная этика в вопросах морали и семейных отношений в Советской Армении в 1920-30-ых годах, «Ակունք», թիվ 3 (9), Երևան, ԵՊՀ հրատ, 2013, էջ 81-88:

ЖАМГАРЯН ГАГИК АГАСЕВИЧ

ВНУТРИПАРТИЙНАЯ ЖИЗНЬ КОММУНИСТИЧЕСКОЙ ПАРТИИ АРМЕНИИ В КОНТЕКСТЕ ПОВСЕДНЕВНОСТИ (1920-1930-ЫЕ ГОДЫ)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 “История Армении”.

Защита состоится 9-го декабря 2014 г. в 13⁰⁰, на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте истории Национальной Академии Наук РА (0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4).

РЕЗЮМЕ

В диссертации Гагика Жамгаряна на соискание ученой степени кандидата наук впервые освещается внутрипартийная жизнь коммунистической партии Армении в 1920-1930-х гг. в свете повседневности. Работа состоит из введения, трех глав, заключения и списка использованных источников и литературы.

В первой главе отдельным подзаголовком представлена проблема повседневности в историографии, сделана попытка на основании точек зрения передовых специалистов истории повседневности определить предмет и задачи истории повседневности, проанализировать особенности истории повседневности как нового исследовательского направления в исторической науке. В той же главе автор коснулся тех сторон политики армянской коммунистической партии, которые имели отношение к нормам партийной этики. Сопоставлением разнообразных источников и литературы представлены те основные идеологические, политические подходы, которые имели место быть в требованиях к моральной характеристике партийных работников. Всесторонне проанализировав эти требования, автор обосновывает тезис о том, что выработка и утверждение норм партийной этики было важнейшим политическим вопросом коммунистической партии, так как служило утверждению в общественном сознании партийной идеологии.

В первой главе также представлено отношение партии к семейным отношениям, его представление семьи истинного партийца. Так как семья считалась первичной, очень важной средой формирования социалистического сознания, коммунистам надлежало руководствоваться идеологическими установками при создании семьи и при несении семейных обязательств. С одной стороны, партия отвергала пренебрежительное отношение к этим обязательствам: осуждались внебрачные связи, уход из семьи, халатное отношение к воспитанию детей, партия взяла под свою защиту права женщин, провозгласила их освобождение от архаических семейных обязательств, подчеркивала важность их грамотности и общественной активности. Но с другой стороны, в силу указанных идеологических установок семья переставала быть средой частной жизни партийца. Обсуждение семейной жизни и морального облика партийца в коллективе, коллективное нареkanie его проступков некоторые даже интимные стороны семейной жизни фактически делали общественным достоянием. На семейные отношения неблагоприятно отразились также идеологические представления классовой борьбы. Когда партия провозгласила непримиримую борьбу против кулачества, ”троцкистов” и ”врагов народа”, каждый мог попасть под эти идеологические ярлыки, и тогда считалось не только

нормальным, но и необходимым отказаться от члена семьи не пролетария, даже если это близкий родственник. Таким образом, существовала некая модель семьи, которая в диссертации условно названа "пролетарской", только которая могла рассчитывать на поддержку со стороны государства и партии.

Автор обратился также к политической грамотности как особо важном личностном качестве коммуниста, равно как и важнейшему условию для продвижения по карьерной лестнице, которая вдобавок еще и характеризовала его моральные ценности. Однако все представления политической грамотности сводились к усвоению идеологических штампов, партийной риторики и безоговорочному признанию исключительных заслуг партии перед народом, его неоспоримой правоты.

Во второй главе на основании всестороннего анализа архивных материалов как то письма от граждан, адресованные партийным органам, письма-жалобы представлены основные восприятия бюрократизма в общественном самосознании и их проявления во внутрипартийной обыденности. Бюрократизм представлен в лице чиновничьих вольностей, в грубости начальников, в учинении волокит и так далее. Анализируются также те основные методы, которыми обычные люди пытались одолеть повседневные сложности жизни, учиненные бюрократическим отношением чиновников. В главе также представлены те основные причины, из-за которых становилось невозможным преодоление бюрократизма в советском партийном и государственном аппаратах.

В третьей главе автор обратился к политическим репрессиям 1936-1938 гг., имевшим место в Советской Армении. Они представлены с точки зрения морально-психологического воздействия, оставленного в партийной жизни и общественных реалиях. Представляются основные методы и подходы проведения массовых репрессий, которыми руководствовались силовые и партийные структуры. В силу этих мероприятий в обществе воцарилась атмосфера всеобщего страха и недоверия. Обычным делом стали всевозможные доносы на соседей, на близких, на друзей и так далее. В главе анализируются также мотивации этих доносов, которые были не только обусловлены сознанием партийного долга и желанием отгородить себя от подозрений, но и могли быть следствием личных инициатив, холодных и корыстных расчетов, желания избавиться от ненавистного человека.

В главе представлены также коренные изменения в осмыслении морального долга коммуниста. Фактически идеи о недопустимости клеветы на товарищей, необоснованных обвинений, склок и других искажающих моральный облик партийца явлений теряли свое значение, потому что именно эти явления были распространены в партийной жизни 1930-ых годов.

В заключении подведены итоги проведенной работы и изложены основные выводы исследования.

ZHAMHARYAN GAGIK AGHAS

THE INTER-PARTY LIFE OF THE COMMUNIST PARTY OF ARMENIA IN THE CONTEXT OF EVERYDAY LIFE (1920–1930s)

Dissertation for the degree of the Doctor of History on the specialization
of “History of Armenia” 07.00.01.

The defense of the dissertation will be held on December 9, 2014, 13⁰⁰ at the session of the
Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the
Institute of History of the National Academy of Sciences of RA
(0019, Yerevan, Marshal Baghramyan Avenue 24/4).

SUMMARY

The intraparty life of the Communist Party of Armenia in 1920-1930s in the light of everyday life is for the first time highlighted in the PhD thesis in Science of Gagik Zhamharyan. The work consists of Introduction, 3 Chapters, Conclusion and Bibliography.

The first chapter presents with a separate subtitle the problem of everyday life history in historiography, an attempt is made to determine the subject and tasks of routine history on the basis of the viewpoints of foremost historians, to analyse the peculiarities of everyday life history as a new line of research in historical science. This chapter also touches upon those sides of policy of the Armenian Communist Party which referred to the norms of party ethics. The comparison of various sources and literature presents those main ideological, political approaches which happened to be in the demands to the moral characteristics of party officials. Having analyzed these demands in detail, the author substantiates the thesis on the ground that development and approval of the norms of party ethics was one of the most important issues of the Communist Party as it served for the confirmation in the public conscience of party ideology.

The first chapter also presents the attitude of the party towards family relations, its vision of the family of a real party official. As the family was considered to be a primary and a very important sphere of formation of socialist conscience, the communists had to follow ideological policy when forming a family and bearing family responsibilities. On the one hand, the party rejected contemptuous attitude towards those obligations; extra-marital relations, leaving the family, negligent attitude towards the child upbringing were condemned the party took the rights of women under protection, declared their emancipation from archaic family obligations, highlighted the importance of their literacy and public activity. On the other hand, due to the mentioned ideological policy the family seized to be a sphere of private life of a party official. Discussion of the family life and moral character of the party official, collective admonition of his offences factually made some, even intimate sides of family life public ownership. Ideological visions of class struggle also had an unfavourable effect on the family relations. When the party declared violent struggle against kulaks, trotskyitesandenemies of nation, everyone could correspond to those ideological labels, and it was not only considered normal but necessary to abandon the family member who was not a proletarian, even if he was a close relative. Thus, there existed some family model, conditionally called proletarian in the thesis, which could rely upon support from the state and party.

The author also referred to the political literacy as a specifically important personal trait of a communist, as well as one of the most important conditions for the career growth which in addition characterised his moral values. However, all visions of political literacy ended up in adoption of ideological stamps, party rhetorics and unconditional acception of shining merits of the party for the people, its incontestible rightness.

The second chapter describes the main perceptions of bureaucracy in public conscience and their manifestations in the intraparty routine on the grounds of comprehensive analysis of archaic materials, such as letters from citizens addressed to party members, letter-complaints. Bureaucracy is represented in the face of bureaucratic Carta, in the rudeness of the chiefs and perpetrated in portage and so on. The main methods by means of which ordinary people tried to conquer everyday life hardships, created by bureaucratic attitude of officials, are also analyzed. The chapter also presents the main reasons which made it impossible to conquer bureaucracy in the soviet party and state establishments.

In the third chapter the author referred to the political repressions of 1936-1938 s which happened in the Soviet Armenia. They are represented from the view point of moral-psychological influence left in the party life and public realities. It describes the main methods and approaches of realization of massrepressions by which power and party structures were ruled, such as propagation of myths about trotskyite plot against the party and its leader, about spies of capitalis countries, representing themselves as communists, which must be discovered and exposed, about the necessity to strengthen the party vigilance and pitiless struggle against the wreckers, enemies of the people and so forth. The juridical system was adapted for the realization of repression; investigation of political crimes without the right to appeal where simplified, confession which was obtained by different means became the main proof of the person's guilt.

Due to the mentioned measures the atmosphere of general fear and mistrust reigned in society. Any denouncements against the neighbours, friends and others became usual. The chapter also analyzes the motives of those denouncements, which were not only conditioned by the realization of party obligations and the wish to protect oneself against suspisions, but could also be a result of personal initiatives, cold and mercenary calculations, the wish to liquidate the hateful person.

The chapter describes the fundamental changes in apprehension of the moral duty of the communist. In fact ideas about inadmissibility of slander against friends, groundless accusations, squabbles and other phenomena distorting moral image of the party official lost their importance because those very phenomena were spread in the party life of the 1930s.

The results of the work carried out and the main conclusions of the research are summed up and stated in the conclusion.